ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

Հայկ. ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ

Բոլշևիկյան պարտիայի ականավոր գործիչ, մեծ Լենինի հավատարիմ զինակից Սուրեն Սպանդարյանը ծնվել է 1882 թ. դեկտեմբերի 15-ին, Թբիլիսիում։ Դեռ մանուկ հասակից նա աչքի էր ընկնում իր հաստատակամությամբ և արտակարգ ընդունակություններով։

Նա շատ էր կարդում։ Հայ ականավոր գրող Նար-Դոսը, որը շատ մոտիկից գիտեր Սպանդարյանների ընտանիքը, գրել է, որ պատանի Սուրենը «գրքերը կլանում էր ուղղակի մի շնչում»[1]։ Սպանդարյանը հատկապես մեծ սեր էր տածում դեպի ռուս ռևոլյուցիոն դեմոկրատները Բելինսկին, Գերցենը, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը։ Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը նրա սիրած բանաստեղծներն էին, որոնց ստեղծագործություններից շատ կտորներ կարող էր անգիր արտասանել։ Պատանի հասակից նա հետաքրքրվում էր գրականագիտության, արվեստի, բնագիտության հարցերով։ Քաղաքական-հասարակական կյանքի խնդիրները խորապես հուզում էին պատանի Սուրենի հետաքրքրասեր միտքը։ XIX դ. վերջերին ծավալվող հայ ազատագրական շարժումները կլանում են նրա ուշադրությունը։ Արյունարբու Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված 1894–96 թթ. հայկական կոտորածները պատանու սիրտը այնպես են ալեկոծում, որ նա մտադրվում է փախչել Արևմտյան Հայաստան և կռվել թուրքական բռնակալության դեմ՝ հայ ժողովրդի ազատագրության համար։

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Ռուսաստանում հզոր ալիքով բարձրացավ բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարը հանուն բոլոր ճնշվածների սոցիալական և ազգային ազատագրության։ Այդպիսի պայմաններում մարքսիզմի անհաղթ ուսմունքը լայն տարածում է գտնում աշխատավոր մասսաների և առաջադեմ ինտելիգենցիայի մեջ։ Վ. Ի. Լենինը, տալով այդ ժամանակաշրջանի բնութագիրը, նշել է. «Մարքսի ուսմունքը լիակատար հաղթանակ է տանում և տարածվում է»[2]։

---

1 Նար-Դոս, Հայը և որդի, «Մարտակոչ», 1926, № 219։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 738։

Մարքսիստական գաղափարների ակտիվ պրոպագանդա էր սղվում նաև Անդրկովկասում։ 1901—1902 թթ. ստեղծվեցին ՌՍԴԲՊ Բաքվի, Թիֆլիսի և Բաթումի կազմակերպությունները, որոնք սկզբից ևեթ կանգնեցին լենինյան «Իսկրա»-ի դիրքերում։ «Իսկրա»-ի հետքերով էին գնում այդ տարիներին հրատարակվող «Բրձոլա» և «Պրոլետարիատ» անլեգալ թերթերը։ Լայն թափ էին ստանում անընդհատ աճող բանվորական գործադուլներն ու ցույցերը։ Այդ բուռն տարիներին, 1900-ական թթ. սկզբին Թիֆլիսի գիմնազիայի սան Սուրեն Սպանդարյանը մասնակցում է մարքսիստական անլեգալ կազմակերպության աշխատանքներին և դառնում ՌՍԴԲՊ Թիֆլիսի կազմակերպության ակտիվ գործիչ։ Այդ ժամանակից սկսած երիտասարդ Սպանդարյանը զինվորագրվում է Լենինի մեծ գաղափարների հաղթանակի համար մղվող պայքարին։

Գիմնազիան ավարտելուց հետո, 1902 թ. Սուրեն Սպանդարյանը իր ուսումը շարունակում է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում, 1903—1904 ուսումնական տարում փոխադրվում է իրավաբանական ֆակուլտետ։ Ապրելով նյութական կարիքի մեջ, նա ամբողջովին նվիրվում է գիտությունների խոր ուսումնասիրմանն ու մարքսիստական գաղափարների տիրապետմանը։

1904 թ. դեկտեմբերի 5-ին Մոսկվայի ուսանող երիտասարդությունը «Կորչի՛ ինքնակալությունը», «Կորչի՛ պատերազմը» լոզունգներով ելավ մեծ ցույցի, որի ակտիվ կազմակերպիչներից մեկը Սուրեն Սպանդարյանն էր։ Իր հորն ուղղած նամակում, նկարագրելով այդ ցույցի խոշոր նշանակությունն ու ցարիզմի գործադրած դաժան հալածանքները, նա գրում է. «Չեմ թաքցնի, որ ես մասնակցեցի, բայց հաջողաբար անվնաս դուրս պրծա, թեպետ գլխարկս մնաց պատերազմի դաշտում և ստացա մի քիչ ծեծ, թեպետ ճշմարտությունը պահպանելու համար պիտի ասեմ, որ ինքս էլ իմ կոմբալով լավ ջարդեցի պոլիցայի գլուխները և մեջքերը»[3]։

Վրա հասան 1905 թ. հունվարի 9-ի փոթորկալի դեպքերը, երբ Լենինի բնորոշումով «ռուսական բանվորական շարժումը մի քանի օրում բարձրագույն աստիճանի է հասել»[4]։ Մոսկվայի համալսարանը, որպես ռևոլյուցիոն խմորումների վտանգավոր մի օջախ, փակվել էր։ Նույն թվականի ապրիլին Սպանդարյանը մեկնում է Գերմանիա՝ Մոսկվայի կոմիտեի մի շարք հանձնարարություններով։ Հունիս ամսին Սպանդարյանը նորից վերադառնում է Ռուսաստան և ակտիվ պարտիական աշխատանքի անցնում Թիֆլիսում, ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեում։

Ինչպես ամբողջ Ռուսաստանի, այնպես էլ Անդրկովկասի բանվորական կենտրոնները ռևոլյուցիոն պայքարի մեծ վերելք էին ապրում։ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Ալավերդում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում ռևոլյուցիոն պայքարը չտեսնված թափով էր դարձանում։ Այդ պայքարին, ակտիվորեն լենինյաններ Ստ. Շահումյանի, Մ. Ցխակայայի, Ա. Ջափարիձեի, Ս. Խանոյանի և ուրիշների հետ միասին, եռանդուն և դեկավար մասնակցություն է ցուցաբերում նաև Սուրեն Սպանդարյանը։ Նրա այդ շրջանի գործունեության մասին հին բոլշևիկ Շ. Էլիավան իր հուշերում գրում է. «Կարճ ժամանակ միասին կատարած եռանդուն և կուսակցական տաք աշխատանքի ըն-

3 Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, 1939, էջ 326։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 114։

թացքում ես իմացա ընկ. Տիմոֆեյի իսկական անունը—Սուրեն Սպանդարյան... Որքան ավելի էինք միասին աշխատում, ես ավելի և ավելի էի համոզվում, որ մենք գործ ունենք մեր կուսակցության պատկանող ոչ թե սովորական մարդու, այլ արտաքո կարգի ընդունակություններով օժտված մի անձնավորության հետ»[5]։ Թշնամիների դեմ մղած պայքարում Տիմոֆեյը հանդես էր գալիս որպես կոփված և տեսական լուրջ պատրաստություն ունեցող պրոֆեսիոնալ ռևոլյուցիոն գործիչ։ «Մենշևիկների և զանազան դույների ազգայնական հոսանքների դեմ մղած պայքարի տարերքում ընկ. Սուրենը հայտնաբերում էր հայացքների հազվագյուտ կայունություն և տոկունություն»[6]։ Սպանդարյանի գործունեությունը չէր կարող վրիպել ոստիկանության աչքից։ Թիֆլիսի պահնորդական բաժանմունքը նրան հատուկ հսկողության տակ է առնում։ Նրա ամեն մի քայլն ու հանդիպումը գրանցվում են ոստիկանության դիրեկտորի հույժ կարևոր գործերի մատյանում[7]։

1905 թ. հոկտեմբերին, երբ ռևոլյուցիան իր զարգացման բուռն վերելքն էր ապրում, Սպանդարյանը մեկնում է Մոսկվա։ Այդ օրերին Մոսկվայի համալսարանում էր տեղավորված զինված ապստամբությունը ղեկավարող բոլշևիկյան շտաբը։ Համալսարանը վերածվել էր զինված ամրոցի և շրջապատվել բարիկադներով։ Լաբորատորիաներն ու դասասենյակները դարձել էին զինանոցներ, որտեղ զենքեր ու ռումբեր էին պատրաստում։ Մոսկվայի 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբության կարևոր միջնաբերդը դարձավ Կրասնայա Պրեսնյայի շրջանը, որտեղ պրոլետարիատի հերոս մարտիկների շարքերում զենքը ձեռքին կռվում էր նաև Սպանդարյանը։ Ինը օր տևող այդ ահեղ մարտերը վերջացան պրոլետարիատի պարտությամբ։ Ցարիզմը չտեսնված դաժանությամբ ճնշեց ու արյան մեջ խեղդեց ազատության համար մարտնչող հերոսների պայքարը։ «Իր հեղափոխական-մարքսիստական հիմնական դասերն ու կոփվածքը ընկ Սուրենն ստացավ Մոսկվայում»,—գրել է Ա. Մռավյանը[9]։

Սուրեն Սպանդարյանը, որպես «անվստահելի», հեռացվեց համալսարանից։ Նա ստիպված եղավ 1906 թ. սկզբին թողնել Մոսկվան և իր ռևոլյուցիոն գործունեությունը շարունակել Թիֆլիսում։ Ստ. Շահումյանի հետ միասին Սպանդարյանը ակտիվ աշխատանք տարավ հայ բոլշևիկյան մամուլի տարածման գործում։ 1906 թ. ապրիլի 1-ին Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ սկսեց լույս տեսնել հայերեն բոլշևիկյան «Կայծ» թերթը։ Շուտով Ստ. Շահումյանը մեկնեց Ստոկհոլմ ՌՍԴԲՊ IV համագումարին մասնակցելու, և «Կայծ»-ի հրատարակման ամբողջ ծանրությունն ընկավ Ս. Սպանդարյանի ու Ս. Կասյանի վրա։ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և Ս. Կասյանը խոշոր աշխատանք տարան «Կայծ», ապա նաև «Նոր խոսք» բոլշևիկյան թերթերը հրատարակելու և լայն մասսաների մեջ տարածելու ուղղությամբ։ Նրա ան-

5 Շ. Էլիավա, Ուսումնասիրենք մարտիկի կյանքն ու աշխատանքը, տե՛ս «Սուրեն Սպանդարյան» (հոդվածների ժողովածու), Երևան, 1927, էջ 17։

6 Նույն տեղում։

7 Տե՛ս Վրացական ՍՍՌ Պետ. պատմական արխիվ, ֆ. 2, գ. 81։

8 Л. Богуцкая, Московские большевики в стачечных боях 1905 года, М., 1948, էջ 92։

9 Ա. Մռավյան, Սուրեն Սպանդարյանի հիշատակը, տե՛ս «Սուրեն Սպանդարյան» (հոդվածների ժողովածու), էջ 5։

սահման նվիրվածության, տեսական խոր պատրաստության, պրոպագանդիստական տաղանդի մասին Ա. Մռավյանը գրել է. «Հեղափոխական մարքսիզմի և լենինիզմի գիտական հիմունքներն ու ռազմական ոգին նա հիանալիորեն յուրացրած էր և ուներ խոհուն պրոպագանդիստի, աշխույժ ժուռնալիստի և մասսայական կրակոտ ագիտատորի բոլոր հատկությունները»[10]։

1906 թ. օգոստոսին Ս. Սպանդարյանը ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեի հանձնարարությամբ խոշոր աշխատանք է տանում Ալավերդու պղնձահանքերի բանվորների շրջանում։ 1905 թ. մարտին, նոյեմբեր-դեկտեմբերին և ապա 1906 թ. օգոստոսին Ալավերդու պղնձարդյունաբերական շրջանի բանվորների ելույթները խթանեցին Բորչալուի և Լոռու շրջանի աշխատավորների քաղաքական պայքարը։ 1906 թ. օգոստոսյան գործադուլն ընթացավ Ս. Սպանդարյանի ղեկավարությամբ։

1906 թ. վերջերին բոլշևիկները, մենշևիկներից սահմանազատվելու համար, «Բոլշևիկների դրական բյուրո» անվան տակ ստեղծեցին իրենց անդրկովկասյան ինքնուրույն մարզային կենտրոնը, որի մեջ մտնում էին Ստ. Շահումյանը, Ֆ. Մախարաձեն, Ս. Սպանդարյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Ցխակայան և ուրիշներ։ Ս. Սպանդարյանը հատուկ հանձնարարություն ստացավ՝ ղեկավարել և օգնել Ելիզավետպոլի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը։ Այստեղ նա լայն աշխատանք ծավալեց կազմակերպությունը բոլշևիկների շուրջը համախմբելու համար, ջախջախիչ հարված հասցրեց մենշևիկներին ու դաշնակներին, կազմակերպեց անլեգալ տպարան։ Երկաթուղու կայարանում ստեղծվեց ուժեղ կազմակերպություն։ Սպանդարյանի ղեկավարությամբ տեղի ունեցած պարտիական կոնֆերանսը բոլշևիկյան որոշումներ ընդունեց։ «Անմոռանալի օրեր էին այդ օրերը,—գրում է Ա. Մռավյանը,—և դաստիարակող նշանակություն ունեցան Գանձակի ընկերների համար։ Ընկ. Տիմոֆեյի ղեկավարությամբ մեր աշխատանքը երկաթուղու բանվորության մեջ ուժեղացավ. գումարեցինք կոնֆերենցիա, որը լսելով Տիմոֆեյի զեկուցումը ընթացիկ մոմենտի և կուսակցական տակտիկայի մասին, միաձայն ընդունեց բոլշևիկյան բանաձև։ Սրամիտ ու վարպետորեն կազմած այդ զեկուցումը մեծ տպավորություն թողեց։ Կուսակցական աշխատանքը բավականին կենդանացավ ու թարմացավ»[11]։

Կովկասյան բոլշևիկյան կենտրոնը, կարևոր նշանակություն տալով Բաքվում տարվող աշխատանքին, 1907 թ. հունվարին Սպանդարյանին ուղարկեց այնտեղ անլեգալ աշխատանքի։ Նա Ս. Օրջոնիկիձեի, Ի. Ֆիոլետովի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Մամեդյարովի, Կազի Մուհամեդի, Խանլարի, Վացեկի, Վլ. Գասպարովի («Սլավա»), Մելիք Մելիքյանի և ուրիշների հետ գլխավորեց Բաքվի բանվորական շարժումը։ «Նրա հմուտ ու եռանդուն աշխատանքով 1907 թ. մի քանի ամիսների ընթացքում Բաքվի Սև քաղաքի ռայոնը մաքրվեց մենշևիկներից և ռայկոմն ամբողջապես անցավ բոլշևիկների ձեռքը։ Առաջ քաշելով և պատրաստելով մի ամբողջ խումբ երիտասարդ բանվորների, ընկ. Տիմոֆեյը Սև քաղաքը դարձրեց բոլշևիկյան բերդ...»[12]։

10 Ա. Մռավյան, նշվ. հոդվածը։
11 «Խորհրդային Հայաստան», 1927, № 99։
12 Ա. Մռավյան, նշվ. հոդվածը։

Բաքվում 1907 թ. փետրվարին Սուրեն Սպանդարյանը, Ստ. Շահումյանի և Ս. Կասյանի հետ միասին սկսեց լույս ընծայել «Օրեր» թերթը։ Սպանդարյանը իրեն հատուկ կրքոտությամբ մերկացնում էր մենշևիկներին, դաշնակներին և պաշտպանում բոլշևիկների տակտիկական դիծը II Պետական դումայի ընտրությունների հարցում։ Քննադատելով համաձայնողական պարտիաների քաղաքականությունը, նա գրել է. «Այժմ սպառնում է ոչ թե սահմանադրական, այլ կադետական վտանգը, այժմ վտանգը «համաձայնվողների» կիսակատար քաղաքականության և մեռնող իշխանության հետ չարչիական համաձայնություններ կայացնելու կողմնակիցներից է սպառնում»[13]։ Սպանդարյանը Բաքվում շարունակում էր իր ռևոլյուցիոն ակտիվ աշխատանքը, երբ 1907 թ. մարտի 5-ին ոստիկանությունը ձերբակալեց և բանտ նետեց նրան։ Բանտի ծանր պայմաններում 20 օր մնալուց հետո Ս. Սպանդարյանին, Ս. Օրջոնիկիձեին և մի քանի ուրիշ ընկերների հաջողվում է ազատվել բանտից։

1907 թ. հունիսերեքյան հեղաշրջումից հետո մոլեգնող ռեակցիայի ծանր ժամանակաշրջանում Սպանդարյանը մնաց որպես լենինյան դվարդիայի անկուն զինվոր և նոր եռանդով շարունակեց ռևոլյուցիոն պայքարը։ Սպանդարյանը ակտիվորեն մասնակցեց «Բակինսկի պրոլետարի» բոլշևիկյան անլեգալ թերթի հրատարակման գործին։ Թերթը խմբագրում և նրա աշխատանքներին ուղղություն էին տալիս Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Ջափարիձեն։ Սպանդարյանի «Քաղաքական ակնարկներ» հոդվածաշարը, որ հրապարակվեց այդ թերթում, միջազգային իրադրության և Ռուսաստանի ներքին քաղաքական կյանքի մարքսիստական խոր վերլուծության փայլուն օրինակ է[14]։ 1907 թ. հոկտեմբերի 25-ին Բաքվի բոլշևիկների կոնֆերանսում ընտրվեց կոմիտեի նոր կազմ, որի մեջ Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Ի. Ֆիոլետովի և մյուսների հետ միասին մտավ նաև Ս. Սպանդարյանը։ «Ս. Օլգին», «Տ.» և այլ ստորագրություններով նա թերթի էջերում հանդես էր գալիս կարևոր տեսական ու բանվոր դասակարգի ամենօրյա պայքարը լուսաբանող հոդվածներով, պաշտպանում մարքսիստական տեսության անաղարտությունը մենշևիկ-լիկվիդատորների ռեֆորմիստական, հակապրոլետարական հարձակումներից։

«Բակինսկի ռաբոչի» թերթը ցարական կառավարության կողմից արգելվելուց հետո բոլշևիկները 1909 թ. փետրվարին սկսեցին լույս ընծայել «Վոլնա» ամսագիրը, որի ակտիվ աշխատակիցն էր Սպանդարյանը։ Ամսագրի հենց առաջին համարում տպագրված «Ամեն ինչ իրար է գալիս» հոդվածում նա մերկացնում է նավթարդյունաբերողների բռնություններն ու դաժան հալածանքները բանվորների դեմ։ 1909 թ. ապրիլին Բաքվում ոստիկանությունը ռևոլյուցիոն գործիչների մասսայական ձերբակալություններ կատարեց։ Ոստիկանության ճանկն ընկավ և բանտ նետվեց նաև Սպանդարյանը։ Բանտից դուրս գալուց հետո նա նորից ռևոլյուցիոն պայքարի առաջին շարքերումն էր։

1909 թ. ամռանը բանվորական շարժումը Բաքվում սկսեց աշխուժանալ, բոլշևիկների գործունեությունը լայն թափ ստացավ։ Բաքվի պարտիական կոնֆերանսը ընտրեց կոմիտեի նոր կազմ։ Կոմիտեի և նրա Բյուրոյի մեջ Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի և մյուսների հետ միասին մտավ նաև Սպան-

---

13 Սուրեն Սպանդարյան, Երկեր, հատ. 1, Երևան, 1959, էջ 137—138։

14 Տե՛ս «Բակինսկի պրոլետարի», 1907, № № 1, 2, 1908, № № 3, 4։

դարյանը։ Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ նա հսկայական աշխատանք կատարեց դաղտնի տպարանի կարգավորման և «Բակինսկի պրոլետարի» թերթի հրատարակությունը վերսկսելու ուղղությամբ։ 1909 թ. օգոստոսին նա նորից ոստիկանության ճանկն ընկավ և երեք ամիս բանտում տառապելուց հետո, վարչական կարգով Բաքվից հեռացվեց, թույլտվություն ստանալով ապրելու Դերբենտում։ 1910 թ. հունվարին Սպանդարյանը հեռանում է Դերբենտից և ծպտյալ բնակություն հաստատում Թիֆլիսում, որտեղ ծանր կարիքի ու զրկանքների մեջ ապրում էր նրա ընտանիքը՝ կինը և չորս երեխաները։ Սպանդարյանը շուտով ընտրվում է ՌՍԴԲՊ Թիֆլիսի կոմիտեի անդամ ու Ա. Ջափարիձեի, Ե. Ստասովայի, Պ. Արվելաձեի, Հ. Հակոբյանի, Ս. Կասյանի և ուրիշների հետ շարունակում իր եռանդուն ռևոլյուցիոն աշխատանքը։ 1910 թ. օգոստոսից իր ձեռքը վերցնելով «Կուրյեր-կոպեյկա» օրաթերթի փաստական ղեկավարությունը, Սպանդարյանը այն դարձրեց ռևոլյուցիոն պայքարի կարևոր զենք, մերկացնելով ցարական ռեժիմի դաժան քաղաքականությունը։ Նույն թվականի դեկտեմբերին, Ռ. Քաթանյանի, Ս. Կասյանի և ուրիշների աջակցությամբ, նա սկսեց հրատարակել «Վիստոկ-կոպեյկա» օրաթերթը, որը տիրող կարգերը մերկացնող իր սուր բննադատության համար 1911 թ. ապրիլի 10-ին արգելվեց ցարական կառավարության կողմից։ «Վիստոկ-կոպեյկա»-ին փոխարինելու եկավ «Տրուդովայա կոպեյկա»-ն, որը նույնպես երկար կյանք չունեցավ։

Համապարտիական կոնֆերանս հրավիրելու համար 1911 թ. Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ արտասահմանից Ռուսաստան, ապա նաև Անդրկովկաս եկավ Ս. Օրջոնիկիձեն, որը Թիֆլիսում անմիջապես կապ հաստատեց Սպանդարյանի հետ։ Թիֆլիսի բոլշևիկների ակտիվի խորհրդակցությունը, լսելով Ս. Օրջոնիկիձեի զեկուցումը, ստեղծեց ՌՍԴԲՊ Կովկասյան մարզային Բյուրո, որի կազմի մեջ մտան Ս. Օրջոնիկիձեն, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ե. Ստասովան և ուրիշներ։ Անդրկովկասի բոլշևիկները, կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումները, եռանդուն աշխատանք տարան համապարտիական կոնֆերանս հրավիրելու օգտին։ Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի ակտիվ աջակցությամբ Օրջոնիկիձեն 1911 թ. սեպտեմբերին Բաքվում հրավիրեց Ռուսաստանի խոշոր կազմակերպությունների խորհրդակցություն և ստեղծվեց Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողով, որը լայն աշխատանք ծավալեց կոնֆերանսի նախապատրաստման ուղղությամբ։ Բարվի կազմակերպությունը համապարտիական կոնֆերանսի պատգամավոր ընտրեց Ս. Սպանդարյանին, Թիֆլիսինը՝ Ս. Օրջոնիկիձեին։ Ս. Սպանդարյանը, կոնֆերանսի պատգամավոր ընտրվելու կապակցությամբ, այցելեց Անդրկովկասի մի շարք քաղաքներ, եղավ Մոսկվայում, Պետերբուրգում և Մերձբալթյան երկրներում։ Օրջոնիկիձեն Սպանդարյանի Լատվիա մեկնելը անհրաժեշտ էր գտնում, քանի որ այնտեղ ուժեղ էր օպորտունիստների ազդեցությունը։ Ս. Սպանդարյանի ջանքերի շնորհիվ Ռիգայի պարտիական կազմակերպությունը ապահովեց բոլշևիկների հաղթանակը[15]։ Պետրոգրադում նույնպես, կապվելով հին բոլշևիկ Ն. Գ. Պոլետաևի հետ, Սպանդարյանը խոշոր աշխատանք կատարեց, օգնելով բոլշևիկյան «Զվեզդա» թերթի աշխատանքներին, «Յունիուս» ստորագրությամբ

15 Տե՛ս «Красный архив», 1939, № 6 (97), էջ 112։

մի շարք հոդվածներ գրեց, մերկացնելով մենշևիկ-լիկվիդատորների դավաճանական քաղաքականությունը։

Ավարտելով իր աշխատանքները Ռուսաստանում, Սպանդարյանը մեկնեց արտասահման՝ Պրագայում կայանալիք համապարսիական կոնֆերանսին մասնակցելու համար։ Կոնֆերանսում նա ծանոթացավ Վ. Ի. Լենինի հետ։ Կոնֆերանսը Կենտկոմի անդամ ընտրեց նաև Ս. Սպանդարյանին։ Նա մտավ Ռուսական Բյուրոյի կազմի մեջ։ Պրագայի կոնֆերանսը, որը պարտիան մաքրեց լիկվիդատորներից ու մենշևիկներից, նոր թափ հաղորդեց երկրում բարձրացող ռևոլյուցիոն շարժումներին։ «Վերջապես հաջողվեց,—գրել է Վ. Ի. Լենինը,—հակառակ լիկվիդատորական սրիկաների—վերածնել պարտիան և նրա Կենտրոնական Կոմիտեն»[16]։ Պրագայի կոնֆերանսից անմիջապես հետո Լայպցիգում տեղի ունեցավ ՌՍԴԲՊ նորընտիր Կենտկոմի և Պետական դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի անդամների համատեղ խորհրդակցությունը, որտեղ Պրագայի կոնֆերանսի արդյունքների մասին Վ. Ի. Լենինի տված զեկուցումից բացի լսվեց նաև Ս. Սպանդարյանի հաղորդումը Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովի կատարած աշխատանքի մասին։ Դրանից հետո պարտիական կարևոր գործով Սպանդարյանը Վ. Ի. Լենինի հետ եղավ Բեռլինում, ապա նաև Փարիզում։

Պրագայի կոնֆերանսից հետո վերադառնալով Ռուսաստան, Սպանդարյանը նոր եռանդով անցավ աշխատանքի։ Նա այցելեց Ռիգա, Պետերբուրգ, Մոսկվա, Թիֆլիս, Բաքու և այլ վայրեր, զեկուցեց կոնֆերանսի արդյունքների և տեղական կազմակերպությունների խնդիրների մասին։ Ս. Կասյանը իր հուշերում պատմում է, որ երբ Սպանդարյանը վերադարձավ Պրագայի կոնֆերանսից, «վերջ չկար նրա՝ Լենինի վերաբերմամբ տածած հմայքին, սերին և հավատարմությանը։ Նա չէր կարողանում խոսել առանց գթաշարժվելու Լենինի մասին»[17]։

1912 թ. մարտի 18-ին, Բալախանիի պարտիական կազմակերպության ժողովում Պրագայի կոնֆերանսի արդյունքների մասին զեկուցելու ժամանակ, պրովոկատորների մատնությամբ, ոստիկանությունը ձերբակալեց Սպանդարյանին և ուրիշների։ Բանտում Սպանդարյանը հանդիպեց կովկասյան բոլշևիկների առաջնորդ Ստեփան Շահումյանին և մանրամասն տեղեկություն տվեց Պրագայի կոնֆերանսի որոշումների, Վ. Ի. Լենինի ցուցումների մասին։

Վ. Ի. Լենինը, Սպանդարյանի հետ անձնական ծանոթություն հաստատելուց հետո, շատ մեծ հույսեր էր կապում Ռուսաստանում նրա կատարելիք աշխատանքի հետ։ Սպանդարյանի ձերբակալության լուրը ստանալով, Լենինը մտահոգության մեջ է ընկնում։ Ն. Կ. Կրուպսկայայի հիշողություններից երևում է, թե Իլյիչը ինչպիսի մեծ հոգատարություն էր ցուցաբերում Սուրեն Սպանդարյանի նկատմամբ[18]։

1912 թ. մայիսին Սպանդարյանը նորից ձերբակալվեց։ Մեկ տարի հետո տեղի ունեցավ Սպանդարյանի, Ստասովայի, Շվեյցերի և ուրիշների դատավարությունը։ Սպանդարյանը դատարանում իրեն պահեց որպես ռևոլյուցիային, ժողովրդի ազատության պայքարին անհունորեն նվիրված անվեհեր աս-

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 1։

17 Ս. Կասյան, Բարեկամ ընկերոջ մասին, տե՛ս «Սուրեն Սպանդարյան» (հոդվածների ժողովածու)։

18 Տե՛ս Н. К. Крупская, Воспоминания о Ленине, М., 1933, էջ 178։

պետ, որը պատրաստ էր Լենինի գործի համար իր կյանքը զոհել։ Սպանդարյանը և իր ընկերները դատապարտվեցին ցմահ աքսորի և սեպտեմբերի 21-ին շղթայակապ ուղարկվեցին Ենիսեյսկի նահանգը։ Նա ճանապարհին ծանր տանջանքների էր ենթարկվում, սակայն իր կայտառությունն ու հոգու արիությունը չէր կորցնում։ «Հիմա այստեղ սարսափելի ցուրտ է,—գրում է Սպանդարյանը իր կնոջը,—երկյուղով մտածում եմ ապագայի մասին,—չունենալով տաք հագուստ, ոտնաման և այլն։ Հոգ տար փողի մասին և ուղարկիր ինձ։ Ես վաղուց է, որ փող չունեմ։ Ճանապարհին շատ ծախս եղավ։ Այստեղ ամեն տեսակ միջատներն ու անիծներն անպատիժ ուտում են ինձ. ամբողջ մարմինս չանգռտված է և արյունլվիկ։ Տրամադրությունս կայտառ է, ուրախ և լավ։ Կեցցե կյանքը։ Մենք դեռ ոտքի կկենանք.—կարիք չկա հուսահատվելու»[19]։

1913 թ. նոյեմբերի 8-ին Ենիսեյսկի նահանգապետի կարգադրությամբ Սպանդարյանը բնակեցվեց Ինոկենտեսկայա գյուղում։ Շուտով նա պարտիական աշխատանքի մեջ ներգրավեց շատ աքսորականների, նրանց համար գրադարան ստեղծեց, կազմակերպեց Մայիսի 1-ի տոնակատարությունը։

Աքսորավայրում Սպանդարյանը ստեղծեց ինֆորմացիոն բյուրո, որը ակտիվ աշխատանք էր տանում աքսորականների մեջ, նրանց հաղորդակից դարձնում ընթացիկ քաղաքական կյանքին և Ռուսաստանի աշխատավորների ռևոլյուցիոն պայքարին։ Սպանդարյանը նամակագրական կապեր հաստատեց Վ. Ի. Լենինի և ուրիշ շատ ռևոլյուցիոն գործիչների հետ։ 1914 թ. մարտի 15-ին Վ. Ի. Լենինին ուղղած նամակում Սպանդարյանը գրում էր. «Ես այնուամենայնիվ հաստատ հույս ունեմ, որ հեռու չէ «օրը», և որ մենք դեռ պիտանի կլինենք գործի համար»[20]։

Վ. Ի. Լենինը շարունակ հետաքրքրվում էր Սպանդարյանի կյանքով, հոգում նրան նյութական օգնություն հասցնելու մասին։ Դեռևս 1913 թ. հունիսին, երբ Սպանդարյանը Մետեխի բանտում էր, Ն. Կ. Կրուպսկայան Լենինի հանձնարարությամբ գրում է Բեռլին՝ Սլավա Բասպարովին և խնդրում նյութական օգնություն կազմակերպել Սպանդարյանին։ Վ. Ի. Լենինի աջակցությամբ Սպանդարյանը նյութական օժանդակություն է ստանում բանտարկյալներին և աքսորականներին օգնող Կրակովյան միությունից, ինչպես նաև Ռուսաստանի քաղաքական բանտարկյալներին օգնող Բեռլինի ընկերությունից։ Բացի այդ, Սպանդարյանը ընկերների աջակցությամբ ստանում է գրականություն, «Պրավդա» թերթը, «Պրոսվեշչենիե» ամսագիրը, կովկասյան թերթեր և «Նոր խոսք» ամսագիրը։

Ցարական կառավարությունը, վախենալով երկրում բարձրացող ռևոլյուցիոն շարժումներից, ավելի խստացրեց հսկողությունը աքսորականների վրա։ 1914 թ. մայիսին Սպանդարյանին փոխադրեցին ավելի հյուսիս՝ Տուրուխանյան երկրամասի Մոնաստիրսկոյե գյուղը։ Սակայն այստեղ ևս Սպանդարյանը հապվեց շրջակայքի աքսորականների հետ, հավաքագրեց նրանց և ակտիվ քաղաքական աշխատանք ծավալեց։ Նա սերտ կապ էր հաստատել Յա. Սվերդլովի, Ա. Մասլեննիկովի, Ա. Ենուկիձեի և շատ ուրիշների հետ։ Որոշ ժամանակից հետո Մոնաստիրսկոյե տեղափոխվեց նաև Յա. Սվերդլովը։ Շնորհիվ Սպանդարյանի և Սվերդլովի կատարած եռանդուն աշխատանքի, Մոնաստիրս-

19 Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, էջ 331։
20 ՄԼԻ արխիվ, ֆ. 17, ցուց. 14, գ. 47743։

կոյեն դարձավ Սիբիրի աքսորականների քաղաքական աշխատանքի կարևոր կենտրոն։

Տուրուխանյան երկրամաս հասան նաև Վ. Ի. Լենինի թեզիսները պատերազմի նկատմամբ բոլշևիկների ունենալիք վերաբերմունքի մասին։ Սպանդարյանը ջերմորեն պաշտպանեց լենինյան թեզիսները և եռանդուն պայքար մղեց սոցիալ-շովինիստների դեմ։ Նշելով Սպանդարյանի հետևողական լենինյան դիրքը, Ստ. Շահումյանը գրել է. «Ներկա պատերազմի վերաբերմամբ նա պահպանել է ամենայն հարազատությամբ իր միջազգային տեսակետը և առանձնապես հրճվանք էր արտահայտում իր նամակների մեջ իմանալով, որ մնացած ընկերներն էլ հավատարիմ են իրենց դավանանքին»[21]։

Վ. Ի. Լենինի նամակները ոգեշնչում ու աշխատանքի անսահման եռանդ էին ներշնչում Սպանդարյանին։ Իլյիչին ուղղված իր նամակներում Սպանդարյանը ջերմ ողջույններ էր հղում առաջնորդին և խնդրում նոր ցուցումներ։

Սպանդարյանի առողջությունը դնալով վատանում էր։ Բժշկական օգնությունից զուրկ ու անօգնական, Սպանդարյանը օրեցօր հյուծվում էր։ Այդ վիճակում էլ նա ստիպված էր լինում օրվա ապրուստը հայթայթելու համար իր ուժերից վեր ծանր ֆիզիկական աշխատանք կատարել, դաժան սառնամանիքներին ծառ կտրել անտառում։

Երկար տանջանքից հետո, հուլիսի սկզբին Սպանդարյանը ստացավ Սնիսեյսկ տեղափոխվելու թույլտվություն։ Սակայն այստեղ էլ նրա վիճակը չբարվոքվեց։ Իր ծանր ու անհուսալի հիվանդության պատճառով Սպանդարյանը 1916 թ. օգոստոսի 8-ին ազատվեց աքսորից՝ 5 տարի ոստիկանության հսկողության տակ մնալու և խոշոր քաղաքներում ապրելու իրավունք չունենալու պայմանով։ Օգոստոսի 25-ին ստանալով այդ որոշումը, Վերա Շվեյցերի օգնությամբ, Սպանդարյանը տեղափոխվեց Կրասնոյարսկ և տեղավորվեց բժշկական ընկերության հիվանդանոցում։ Անասելի տառապանքներից հետո, 1916 թ. սեպտեմբերի 24-ին, 34 տարեկան հասակում, իր տաղանդի ծաղկման շրջանում դադարեց բաբախելուց մեծ ռևոլյուցիոների և ազնիվ քաղաքացու կրակոտ սիրտը։ Նրա աճյունը հանգչում է Կրասնոյարսկում, աքսորականների գերեզմանոցում։

Սպանդարյանի մահը ցնցող տպավորություն թողեց բոլոր նրանց վրա, ովքեր գիտեին նրան, գիտեին որպես պրոլետարիատի վեհ գործին անսահմանորեն նվիրված մարտիկի։ Բոլշևիկյան մամուլը խորին վշտով էր հայտնում ականավոր ռևոլյուցիոների մահը։ Վ. Ի. Լենինը, որը մեծ սիրով ու հարգանքով էր լցված դեպի Սպանդարյանը, պարտիայի կենտրոնական օրգան «Սոցիալ-դեմոկրատ» թերթում զետեղված մահախոսականում բարձր է գնահատում նրա դերը որպես ականավոր գործչի, որը պարտիայի մղած հերոսական պայքարի բոլոր դժվարին էտապներում հավատարիմ մնաց «ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի լավագույն տրադիցիաներին, ոչ մի բոպե չտատանվելով ինտերնացիոնալիզմի դիրքերից»[22]։ Նույնպիսի ջերմությամբ է գրված Ստ. Շահումյանի «Մեր Սուրենը» մահախոսականը։

Ս. Սպանդարյանի կարճատև, բայց իմաստալից ու բուռն կյանքը խոր հետք թողեց հայ ժողովրդի հասարակական-քաղաքական մտքի պատմու-

21 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 425։

22 «Социал-демократ», 1916, № 56.

թյան մեջ։ Սպանդարյանը բոլշևիկյան պարտիայի կազմակերպման առաջին օրերից սկսած, իր ամբողջ էությամբ նվիրվեց մարքս-լենինյան վեհ գաղափարների հաղթանակի գործին։ Սակայն նրան բախտ չվիճակվեց տեսնել Մեծ Հոկտեմբերը, Լենինի գաղափարների հաղթանակը, նոր հասարակարգի այն փառավոր շենքը, որի համար նա իր կյանքը զոհաբերեց ցարական դաժան կարգերի դժնդակ պայմաններում։

СУРЕН СПАНДАРЯН

Ц. П. АГАЯН
Член-корр. АН Арм. ССР

(Резюме)

Профессиональный революционер, выдающийся большевик Сурен Спандарян родился в Тифлисе 15 декабря 1882 г. В начале 1900-х годов он активно участвует в работах нелегальных марксистских организаций. Начиная с этого времени и до конца своей жизни он остается верным бойцом в борьбе за победу великих идей Ленина. В 1902 г. Спандарян, будучи студентом сначала филологического, а затем юридического факультетов Московского государственного университета, выступает как теоретически подготовленный и стойкий марксист-ленинец. В период декабрьского вооруженного восстания 1905 г. он с оружием в руках борется против царизма на Красной Пресне.

Спандарян принимал активное участие в революционных движениях, развернувшихся в Закавказье, руководил забастовкой рабочих Алавердских медных рудников в августе 1906 г., сыграл большую роль в создании и распространении большевистской печати в Закавказье. Как в тяжелые годы реакции, так и в период революционного подъема Спандарян вел последовательную борьбу за победу ленинской линии. Совместно с. Г. К. Орджоникидзе он провел большую работу по организации Пражской конференции партии, на которой выступил с докладом о состоянии партийной работы в Закавказье. Конференция избрала Спандаряна в состав ЦК РСДРП.

В 1913 г. царский суд приговорил Спандаряна к пожизненной каторге и вместе с другими большевиками сослал в далекую Сибирь. Однако и в тяжелых условиях ссылки Спандарян мужественно продолжал свою революционную деятельность. 24 сентября 1916 г. Спандарян скончался в Красноярской больнице.